ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/149-2023
ՄԱԿ-Ի «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

10 հուլիսի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ	**Տ. Խաչատրյան**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Շրջակա միջավայրի նախարար	Հ. Սիմիդյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Վ. Տերտերյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Հ. Վարդանյան
Ֆինանսների նախարարի տեղակալ	Է. Հակոբյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ	Գ. Մանթաշյան
Առողջապահության նախարարի տեղակալ	Լ. Նանուշյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Կ. Կարապետյան
Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ	Գ. Գաբրիելյան
Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ	Ն. Պետրոսյան
Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ	Ա. Պետրոսյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական	Ա. Գասպարյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի օգնական	Լ. Առաքելյան
Վիճակագրական կոմիտեի վիճակագրության պետական խորհրդի անդամ	Ն. Բաղդասարյան
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ	Կ. Սարգսյան
Արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության պետ	Դ. Կնյազյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ	Ռ. Ստեփանյան
Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ	Ն. Բուդոյան
Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ	Գ. Շահնազարյան

Առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ Ն. Բակունց

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային հարց 1՝ Խորհրդի և մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբերի աշխատանքների 2022 թվականի տարեկան հաշվետվության ներկայացում.

1. **Զեկույց ներկայացրեց՝**

1) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը: Ներկայացրեց Խորհրդի կառուցվածքը, նպատակները, խնդիրները, Խորհրդի՝ 2022 թվականին կայացած նիստերը, Խորհրդի հետագա աշխատանքների բարելավման ուղղությամբ իրականացվող քայլերը: Մանրամասն անդրադարձավ Խորհրդին կից երեք՝ Մեղմման և հարմարվողականության հարցերով, Կոնվենցիայի ներքո երկրի հաշվետվայնության հարցերով և Ֆինանսավորման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբերի 2022 թվականի աշխատանքային պլանների կատարողականին:

2. **Համատեղ քննակման արդյունքում որոշվեց.**

1) Հաստատել Խորհրդի և մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբերի աշխատանքների 2022 թվականի տարեկան հաշվետվությունը:
2) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝ շահագրգիռ գերատեսչություններից հավաքագրել և Խորհրդի առաջիկա նիստին Խորհրդի քննարկմանը ներկայացնել 2024 թվականին նախատեսված կլիմայական բաղադրիչ ունեցող միջոցառումների ամփոփ ցանկը՝ դրանց բովանդակային ներդաշնակեցումն ապահովելու նպատակով:

Օրակարգային հարց 2՝ մթնոլորտային օդի մոնիթորինգի համակարգի կատարելագործման հետ կապված առկա խնդիրները.

1. **Զեկույց ներկայացրեց՝**

1) Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Գայանե Շահնազարյանը: Անդրադառնալով մթնոլոորտային օդի որակի մոնիթարինգի ներկա համակարգին՝ տեղեկացրեց, որ այժմ մշտադիտարկում իրականացվում է 10 բնակավայրերում՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում, որտեղ առկա են 15 ստացիոնար դիտակայաններ և 215 պասիվ նմուշառման դիտակետեր: Նշեց, որ համակարգը ներդրվել է 1980-ական թվականներին և թե՛ մեթոդական, թե՛

ենթակառուցվածքների տեսանկյունից հնացած է և չի բավարարում միջազգային ստանդարտներին: Մթնոլորտային օդի մոնիթորինգի հիմնական խնդիրների շարքում առանձնացրեց ավտոմատ սարքավորումներով դիտակայանների և շարժական կայանի բացակայությունը՝ տեղեկացնելով, որ նախնական հաշվարկներով մեկ դիտակայանի արժեքը 130 մլն դրամ է, տարեկան պահպանման ծախսերը՝ 3 մլն դրամ:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) Առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ Նունե Բակունցը, անդրադառնալով մոնիթորինգի առկա համակարգի արդիականացման անհրաժեշտությանը, նշեց, որ գործող համակարգը հնարավորություն չի տալիս չափել օդի հիմնական աղտոտիչներից փոշու, այդ թվում՝ PM_{10} և $PM_{2.5}$–ի կոնցենտրացիաները:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝ մեկամսյա ժամկետում ներկայացնել մթնոլորտային օդի աղտոտվածության կառավարման նպատակով նախատեսվող միջոցառումները և ժամանակացույցը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների կառավարման անհրաժեշտությանը:
2) 2024 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսել օդի աղտոտվածության որակի մշտադիտարկման կայաններ տեղադրելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Օրակարգային հարց 3՝ վերականգնվող էներգետիկայի տեսակարար կշռի ավելացման ուղղությամբ աշխատանքների ներկայացում.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանը՝ անդրադառնալով վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող ընթացիկ միջոցառումներին և դրա տեսակարար կշռի ավելացման տեսանկյունից խնդրահարույց հարցերին:

Օրակարգային հարց 4՝ էներգախնայող բնակարանաշինության համար առավել նպաստավոր պայմանների ձևավորում.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանը՝ անդրադառնալով էներգախնայող բնակարանաշինության խթանմանն ուղղված ընթացիկ միջոցառումներին և դրանց ընդլայնման անհրաժեշտությանը:

Օրակարգային 3-րդ և 4-րդ հարցերի վերաբերյալ փոխվարչապետի կողմից Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին հանձնարարվեց՝

1) Նախապատրաստել և տասնօրյա ժամկետում Խորհրդի անդամներին ներկայացնել օրակարգային հարցերին վերաբերող ընթացիկ իրավիճակը և հնարավոր զարգացումներն ամփոփող տեղեկանք:
2) Ձևակերպել այն խնդիրները, որոնք կարող են դառնալ Խորհրդի քննարկման առարկա՝ ներկայացնելով դրանց վերաբերյալ համապատասխան հիմնավորումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ